չափերի հանին, մենք կարո՞ղ էինք երեւակայել, որ մեզնից մէկը կը դառնայ մի կառավարութեան ներկայացուցիչ, իսկ միւսը, ապրելով նոյն երկրում, ազատութիւն կը վայելէ շնորհիւ մի քուրջի կտորի, որի մէջ գրուած է, թէ Արշակ Զոհրաբեանը հայ լինելու պատճառով չպէտք է ձերբակալուի:

«Ի՜նչ խայտառակութիւն! Կիրակի օրուանից ի վեր, այս անարդ վաւերագիրը այրում է մատներս:

«Ես այլեւս չեմ կարող պահել այն ինձ մօտ. չեմ կարող այն վայրկեանից, երբ դիտեմ, որ ոճրագործ համարուող հայկական զանգուածի դէմ որսի են դուրս եկել ձեր անպատիւ վարձկանները: Սա անկարելի է ինձ համար .որովհետեւ, ո՛վ ինչ կարծիքի էլ լինի իմ մասին եւ ո՛վ ինչ ազդեցութիւններ էլ բանեցնի ջնջելու իմ անցեալը՝ կատարածս դերը դրդում է ինձ (ժողովրդական) զանգուածների հետ լինել: Եւ եթէ այս զանգուածները իրրեւ յանցապարտ պէտք է զնդանները նետուին՝ ես չեմ կարող եւ ոչ էլ կամենում եմ ուրիշ ձեւով բացառութիւն կազմել: Իմ պարտականութիւնն է դիմել այնտեղ, ուր գտնւում են (ժողովրդական) զանգուածները՝ նրանց տանջանքներին եւ նրանց թշուառութեանը մասնակից լինելու համար:

«Հետեւաբար, ձեզ մնաք բարով ասելով, ես, առանց ժամանակ կորցնելու, վերադարձնում եմ ձեզ այս ապահովագիրը, վճռապէս խնդրելով ինձ եւս ձերբակալել, կամ, հակառակ պարագային, վերջ տալ այս հալածանքներին»*):

* * *

Այս դնահատութիւններն ինքնին այնքա՜ն պերճախօս են, որ աւելորդ ենք համարում նրանց վրայ մի բառ իսկ աւելացնել:

Սակայն, հայկական հալածանքների նկարագրութեան էջը փակելուց առաջ՝ կը յանձնարարէինք ընթերցողին, որը այժմ որոշ չափով ծանօթ է նրանց մանրամասնութիւններին, վերյիշել հայ-վրացական պատերազմի սկզբին Ժորդանիայի եւ նրա կառավարութեան կողմից արուած հանդիսաւոր յայտարարութիւններն ու խոստումները, թէ իրենք կռուի են դուրս գալու ոչ թէ հայ ժողովրդի դէմ, այլ հայկական կառավարութեան կամ, աւելի ճիշդ, նրա թիկունքին կանգնած զինուորական խմբակցութիւնների դէմ: Զուգադրելով այդ յայտարարութիւնները եւ հայկական հալածանքների պատմութիւնը՝ մենք կը ստանանք խօսքի եւ գործի հակասութեան կարկառուն օրինակներից մէկը, որոնք այնքա՜ն յատկանշական են Ժորդանիայի քաղաքականութեան եւ դիւանագիտութեան համար...

Անտեղի չենք համարում, այս առթիւ, մի փոքր շեղումն կատարելով մեր բուն նիւթից, երկու խօսք էլ ասել այն ընթացքի մասին, որ պատերազմի ժամանակ ունեցաւ Հայաստանի կառավարութիւնը հակառակորդ կողմի հանդէպ: Նա կարիք չզգաց հրապարակօրէն ցուցադրելու իր բարեացակամութիւնը հանդէպ Վրաստանի եւ վրաց ժողովրդի, որովհետեւ նա հաշիւ չունէր ոչ մէկի եւ ոչ միւսի հետ: Նա գործ ունէր միայն մի քանի վրացական զօրամասերի հետ, որոնք, նորելուկ սոցիալ-իմպերիալիստների հրամանով, գրաւել էին Հայկական Բորչալուն եւ այնտեղ անկարգութիւններ էին անում: Պէտք էր զինուզօրութեամբ պահանջել մաքրելու երկիրը անկոչ հիւրերից, որովհետեւ խնդրանքներն ու յորդորները ապարդիւն էին անցնում: Պարզ է, որ, եթէ Վրաստանի Հանրապետութիւնն ու վրաց ժողովուրդը, առանց նկատի առնելու այս պահանջի արդարութիւնը, թեւ ու թիկունք հանդիսանային տնաբոյս սոցիալ-իմպերիալիստներին՝ զէնքերը պէտք է խօսէին երկու երկիրների միջեւ: Իսկ այնտեղ, ուր զէնքերն են խօսում՝ բարեկամական հաւաստիացումները նողկանք ազդող կեղծիքներ են — ուրիշ ոչինչ:

Այս մտածողութիւնն ունենալով հանդերձ՝ Հայաստանի կառավարութիւնը դիտակցում էր, որ ինքը ըստ ամենայնի խնայող վերաբերմունք պէտք է ունենայ դէպի հարեւան

*) «Նայէ Զնամիայ»ի յօդուածի եւ Արշակ Զոհրաբեանի բաց նամակի բնագիրները ձեռքի տակ չունենալով՝ երկուսն էլ թարգմանում ենք ընկ. Մ. Վարանդեանի "Le Conflit Armeno-Georgien et la guerre du Caucase" գրքից, (տես էջ 92 եւ 95):